



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Հիշելով «սովորական» ցեղասպանությունը

20-րդ դարի վերջին քառորդը նույնքան աղետալի է բախտորոշ էր, որքան դարասկզբի առաջին քառորդը: Նմանությունը ե՛լ ցավի, ե՛լ հաղթանակների մեջ էր: Երկու դեպքում էլ ցավից խուսափել չէր, բայց սփոփանքը եղավ անկախությունն ու հաղթանակը: 20-րդ դարասկզբի թուրքը ոչնչով չէր տարբերվում դարավերջի արդեշտանցի թուրքից, ով նույն «ոգով ու կարգավիճակով» թեակոխել է 21-րդ դար:

Փետրվարյան այս օրերին Սումգայիթում կատարվածը, անշուշտ, անպատիժ մնացած ցեղասպանությունների շղթայի մի օղակ էր, որի շարունակությունը հասավ Բաքու, Կիրովաբադ (Փանձակ) և Ադրբեջանի մյուս հայաշատ վայրեր: Շրթան կտորվեց Արցախում՝ ազգային-ազատագրական պայքարով:

Սումգայիթում կատարվածը փաստեց, որ արցախահայության կողմից ինքնապաշտպանության ջրհիմն էր դեպքում՝ Արցախին եւս սպասվում էր նման ճակատագիր: Փաստեց նաեւ, որ ազգային փոքրամասնություններն Ադրբեջանում միշտ էլ վտանգված են իրենց ֆիզիկական գոյության համար: Փաստեց, որ Ադրբեջանը պատրաստ չէ ընդունել ազգային փոքրամասնությունների իրավունքները, այդ թվում՝ նաեւ՝ ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքը:

Ադրբեջանը գիտակցված ու կանխամտածված կերպով օգտագործեց հայերի ներուժն ու ստեղծարարությունը, կտրեց հայի կառուցող ձեռքը, սպանեց կամ լավագույն դեպքում վտարեց հայերին հայի իսկ կառուցած արդեշտանական քաղաքներից: Արդյունքում՝ փախստականներ ու անտուններ, որոնց ճակատագրերն ու սոցիալական խնդիրներն անորոշ են մինչ օրս:

Ադրբեջանահայ փախստականների հարցն առայսօր մնում է չուժված: Ավելին՝ Ադրբեջանն իրեն հատուկ միջոցներով միջազգային հարթակներում շահարկում է իր փախստականների հարցը եւ փորձում հարցը քաղաքական նպատակներով օգտագործել, ինչը նաեւ մարդու իրավունքների հիմնարար սկզբունքների խախտում է: Մեր կողմից հակադարձ քաղաքականությունն առայսօր ակնկալվող արդյունքներ չի տալիս:

Արդ՝ ադրբեջանահայ փախստականների հարցն իրավական հարթակից քաղաքական հարթակ տեղափոխել է պետք, ընդհուպ մինչեւ ներառում Դարաբադյան հակամարտության բանակցային գործընթացում: Դարաբադյան հիմնահարցի լուծման գործընթացում պետք է լուծվի նաեւ այս խնդիրը:

Սումգայիթի ցեղասպանությունից 28 տարի է անցել, բայց շարժերը չեն արժանացել համարժեք քաղաքական եւ իրավաբանական գնահատականի, եւ այդպես էլ չեն բացահայտվել հանցագործությունների արմատները: Մի բան հաստատ է՝ այն կատարվեց խորհրդային կայսրության բաց աչքի առաջ, եւ 3 օր անց միայն խորհրդային զորքերը որոշեցին կարգ ու կանոն հաստատել: 3 օր էր անցել, բայց Գորբաչովի աչքին այն 3 ժամ թվաց ընդամենը...

Իրողություն է՝ սումգայիթյան ցեղասպանության շատ կազմակերպիչներ հետագայում հայտնվեցին Ադրբեջանի օրենսդիր մարմիններում: Չարմանալի չէ: Ադրբեջանում այդպես են խրախուսում շարժարարներին, ինչպես Սումգայիթից տարիներ հետո հայ սպային կացնահարելու համար խրախուսվեց ազգերի խամաճիկը: Սա Ադրբեջանի անփոփոխ դիմագիծն է: Մեզ մնում է հստակեցնել՝ ի՞նչ ենք անում մենք հետագա սումգայիթներից խուսափելու եւ մեր հիմնարար իրավունքներին տեր կանգնելու համար: Կարծում եմ՝ այս հարցի պատասխանից է կախված մեր անցնելիք ճանապարհի պարզ կամ մշուշոտ լինելը...

Այս բոլոր դասերից կարելի է հանգել միայն մեկ եզրակացության. հայը կարող է որպես հայ լիարժեք եւ անվտանգ ապրել միայն իր հայրենիքում: Որեւէ այլ տեղ վտանգը կամ անմիջական է, սպառնում է ֆիզիկական գոյությանը, կամ մոտենում է աստիճանաբար՝ սպառնալով ինքնությանը, տանելով ձուլման: Ուրեմն թող լինի այնպիսի Գայաստան, որտեղ հայն իրեն լիարժեք հայ կզգա եւ հայրենասիրությունը դառնա նաեւ հայրենասիրություն:



Սումգայիթի զոհերի հիշատակին Ստեփանակերտում հարգանքի տուրք է մատուցվել

Սումգայիթում ադրբեջանցիների ձեռքով իրագործված հայերի ջարդերից անցել է 28 տարի: Ինչպես ամեն տարի, այս անգամ եւս մարդկանց հոսքը դեպի Ստեփանակերտի հուշահամալիր չէր դադարում: Հուշահամալիրում տեղադրված հուշակոթողին, որն անմահացնում է սումգայիթյան ոճրագործության զոհերի հիշատակը, որպես հարգանքի տուրք՝ ծաղկեպսակներ էին դնում եւ ծաղիկներ խոնարհում:

Չոհերի հիշատակը հարգելու էին եկել նաեւ ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանը, Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը եւ հանրապետության բարձրաստիճան ղեկավարությունը:

Իրենց հարգանքի ու խոնարհումի տուրքը մատուցեցին նաեւ ՀՀԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանը, ՀՀԴ Արցախի ԿԿ անդամները, ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության պատգամա-

վորները, կուսակցական ընկերները:

ԼՂՀ ԱԳ նախարար Կարեն Միրզոյանը նշել է, որ մենք հիշում եւ հիշելու ենք սումգայիթյան անմեղ զոհերի հիշատակը: «Ես համոզված եմ, որ վաղ թե ուշ այդ հանցագործության մեղավորները ստանալու են իրենց պատիժը: Իսկ նրանց կատարած հանցագործությունների լավագույն պատասխանն Արցախի ազատ, անկախ հանրապետությունն է՝ իր ամուր պետությամբ, ժողովրդավարությամբ», - լրագրողների հետ ճեպագրույցում ասել է Կ.Միրզոյանը:

«Աշխարհի տարբեր երկրներում գործող ՀՀ Դաշնակցության Հայ Դատի հանձնախմբերը եւ մի շարք այլ կառույցներ մեր ռեսուրսն են՝ արտերկրում աշխատելու եւ մեր նպատակներն առաջ տանելու առումով», - հավելել է արտգործնախարարը:

Սումգայիթի զեպքերը պետական մակարդակով կազմակերպված՝

քաղաքի հայ ազգաբնակչության եղեռն եւ զանգվածային տեղահանություն էր: Հայ ազգի դեմ իրականացրած այս հանցագործության նպատակն էր՝ հայերին ահաբեկելով՝ նոր արյունահեղ գործողությունների հեռանկարով՝ կանխել Արցախյան ազատագրական պայքարի տարածումը:

ԽՍՀՄ պաշտոնական տվյալներով՝ մի քանի տասնյակ, իսկ ոչ պաշտոնական՝ հազարից ավելի սպանվածներ կային, որոնց մեծ մասը՝ խոշտանգումներից ու կտտանքներից հետո ողջակիզված, հազարավոր վիրավորներ, հարյուրավոր բռնաբարվածներ, մեծ թվով անչափահասներ, 18.000 փախստականներ, մի քանի հարյուր ավերված ու թալանված բնակարաններ, տասնյակ կողոպտված կրպակներ, խանութներ, արհեստանոցներ եւ հասարակական նշանակության օբյեկտներ, մի քանի տասնյակ հրկիզված ու ջարդված ավտոմեքենաներ եւ այլն:

Արթուր Մկրտչյանը կդառնար 57 տարեկան



ԼՂՀ ԳԽ առաջին նախագահ Արթուր Մկրտչյանը փետրվարի 16-ին կդառնար 57 տարեկան:

Արթուր Մկրտչյանն ընդամենը 32 տարեկան էր, երբ ընտրվեց Լեռնային Դարաբադի Հանրապետության..

Կարդացեք 5-րդ էջում

Ոճրագործությունն ականատեսների աչքերով



Աբգար եւ Մարիետտա Բալայանները սումգայիթյան եղեռնագործության վկաներ են, ովքեր դեպքերից 28 տարի անց դեռ վախով են վերհիշում կատարվածը:

Կարդացեք 6-րդ էջում

Մեկնարկել է ԼՂՀ Ազգային ժողովի 3-րդ նստաշրջանը

Փետրվարի 24-ին Լեռնային Ղարաբաղի Յանքապետության օրհներգով ազդարարվել է վեցերորդ գումարման Ազգային ժողովի երրորդ նստաշրջանի առաջին նիստի մեկնարկը:

Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը, ողջունելով ներկաներին, անդրադարձ է կատարել հունվար-փետրվար ամիսներին խորհրդարանի գործունեությանը:

«Աժ կանոնակարգ» օրենքի համաձայն՝ ձեւավորվել է երրորդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովը, որի անդամներ են վերընտրվել պատգամավորներ Ռոմելա Դադայանը, Լյուդմիլա Բարսեղյանը եւ Գագիկ Բաղունցը:

Անցնելով օրակարգային հարցերին՝ Ազգային ժողովը քննարկել է ընդունել է:

«Զբաղվածության մասին» ԼՂՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքը, որի համաձայն՝ գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր հանդիսացող, ինչպես նաեւ հաշմանդամություն ունեցող անձինք կարող են ներգրավվել զբաղվածության ծրագրերում:

«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց սոցիալական երաշխիքների մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություն-

ներ եւ լրացումներ կատարելու մասին» եւ «Լեռնային Ղարաբաղի Յանքապետության Նախագահի վարձատրության, սպասարկման եւ անվտանգության ապահովման մասին» ԼՂՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքների փաթեթը: Փաթեթի առաջին օրենքով կկարգավորվեն առաջին ատյանի դատավորի կենսաթոշակային ապահովման խնդիրները, իսկ երկրորդ օրենքը հնարավորություն կտա ԼՂՀ պաշտոնաթող Նախագահի կենսաթոշակը սահմանել աշխատավարձի նկատմամբ տոկոսային հարաբերությամբ:

«Առեւտրի եւ ծառայությունների մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքը, որի համաձայն՝ կառավարության կառուցվածքային փոփոխության արդյունքում բնագավառի գործունեությունը կարգավորող նոր լիազոր մարմին է ճանաչվել ֆինանսների նախարարությունը՝ նախկին ԿՎ հարկային մարմնի փոխարեն:

«Հաստատագրված վճարների մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» ԼՂՀ օրենքը, որի համաձայն՝ նվազեցվել են երթուղիների հաստատագրված վճարների հաշվարկի գործակիցները հեռավոր գյուղական բնակավայրերում անխա-

փան, կանոնավոր փոխադրումներն ապահովելու համար:

Առաջին ընթացքում ընդունվել են «Սննդամթերքի անվտանգության մասին», «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին», «Կերի մասին», «Բուսասանիտարիայի մասին», «Լեռնային Ղարաբաղի Յանքապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ԼՂՀ օրենքում լրացում եւ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքները: Սույնով հստակեցվում են սննդամթերքի անվտանգության, կերի եւ բուսասանիտարիայի ոլորտներում լիազոր մարմնի կառավարման համակարգի նպատակները, խնդիրները, իրավասությունները, եւ ապահովվում է պետական վերահսկողության կազմակերպման անհրաժեշտությունը:

«Հասարակական կազմակերպությունների մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքը, որը ստեղծագործական կազմակերպություններին միություններում միավորվելու կամ ստեղծագործական միություն անվանումը կրելու հնարավորություն կտա:

«Լեռնային Ղարաբաղի Յանքապետության քրեական օրենսգրքում լրացում եւ փոփոխություններ կատարելու

մասին» ԼՂՀ օրենքը, որով սահմանված կարգով՝ առանց վարորդական իրավունքի եւ անսթափ վիճակում մեքենա վարելը, ինչպես նաեւ սթափության վիճակի գնումից խուսափելը կհանգեցնի քրեական պատասխանատվության:

Լեռնային Ղարաբաղի Յանքապետության քաղաքացիական օրենսգիրքն Ազգային ժողովն ընդունել է երկրորդ ընթացքում:

Այնուհետեւ նիստը շարունակվել է տարեկան հաղորդումների ներկայացմամբ: Դատախազության 2015թ. գործունեության մասին հաշվետվությամբ հանդես է եկել ԼՂՀ գլխավոր դատախազ Արթուր Մոսիսյանը, իսկ ԼՂՀ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից՝ 2015թ. իրականացված աշխատանքների մասին՝ խորհրդի նախագահ Բորիս Առուշանյանը:

Աժ կանոնակարգի համաձայն՝ վարչապետ Արայիկ Զարուբյանյանի եւ կառավարության անդամների մասնակցությամբ տեղի է ունեցել նաեւ օրենսդիր գործադիր հարցուպատասխանի ընթացակարգ:

Նիստի ավարտին հայտարարությամբ հանդես է եկել պատգամավոր Յայկ Խանումյանը:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Կառավարությունը պարզաբանել է բժիշկների սոցվճարների տրամադրման կարգը

Փետրվարի 24-ին տեղի ունեցած՝ ԼՂՀ Աժ հերթական նիստում ԼՂՀ Աժ «Դաշնակցություն» խմբակցության պատգամավոր Լեռնիկ Զովհաննիսյանը հանդես եկավ բուժաշխատողներին տրվող սոցվճարների մասին կառավարության որոշումը պարզաբանելու հարցադրումով:

Մասնավորապես, Լեռնիկ Զովհաննիսյանը նշեց, որ իր՝ օրերս տեղի ունեցած պատգամավորական հանդիպումների ընթացքում Բերձորի շրջանային հիվանդանոցի բժիշկների կողմից հարց է բարձրացվել տեղի բուժաշխատողներին 2016 թվականից սոցվճարների տրամադրումը դադարեցնելու մասին: Նրանք նշել են նաեւ, որ նույն ՊՈԱԿ-ի բժիշկները, ովքեր աշխատում են համայնքներում, այդ աշակցությունը ստանում են:

Պատգամավորը խնդրեց պարզաբանել հիվանդանոցի բժիշկներին սոցվճարներից զրկվել՝ հաշվի առնելով այն



Սեփ. թե ինչո՞վ է պայմանավորված շրջանային հիվանդանոցի բժիշկներին սոցվճարներից զրկվել՝ հաշվի առնելով այն

հանգամանքը, որ այդ բժիշկներն ամբողջ շրջանին են սպասարկում:

ԼՂՀ առողջապահության փոխնախարար Չոյա Լազարյանը, ի պատասխան բարձրացված հարցի՝ նշեց, որ համաձայն կառավարության որոշման՝ հավելավճարներ տրամադրվում են միայն Առողջապահության նախարարության կողմից հրավիրված բժիշկներին, եւ նախարարությունը վերաբնակեցվող տարածքներում աշխատող մասնագետներին ի սկզբանե հավելավճարներ տվել է: 2016 թվականից սոցվճարները դադարեցվել են՝ բացառությամբ գյուղական վայրերում, Կովսական եւ Շահումյան քաղաքներում աշխատող բժիշկներին տրամադրող հավելավճարներից:

«ԱՊՍՈՍԺ»

ՀՅԴ երիտասարդականը հաջողություններ է ունեցել միջազգային ասպարեզում



Փետրվարի 26-28-ը Ալբանիայի մայրաքաղաք Տիրանայում տեղի է ունեցել Ընկերվարական երիտասարդների միջազգային միության համաշխարհային համագումարը (IUSY World Congress):

ՀՅԴ երիտասարդականը համագումարին մասնակցում էր չորս հոգանոց

պատվիրակությամբ՝ Սարինե Աբրահամյան (Նիդեռլանդներ), Արփինե Մարտիրոսյան (Շվեդիա), Յայկ Իգիթյան (Հայաստան) եւ Կարապետ Շադոյան (Ավստրիա):

Ալբանիայում տեղի ունեցած համագումարում ժողովականները նախ լսել են շրջանավարտ մարմնի գործունեության զեկույցը, ապա քննարկել փախստականների ներկայիս ճգնաժամի, համաշխարհային խաղաղության, ընկերվարության ու հանդուրժողականության վերաբերյալ հարցեր:

Վերջում ընտրվել է նոր ղեկավար մարմին՝ նախագահություն: ՀՅԴ երիտասարդականն առաջադրել էր փոխնախագահի թեկնածու՝ երոպական կոմիտեում: Երկարատեւ հետեւողական աշխատանքի արդյունքում Կարապետ Շադոյանն ընտրվել է միջազգա-

յին ընկերվարական այս ամենամեծ կազմակերպության հինգ երոպական փոխնախագահներից մեկը՝ ստանձնելով Սեւծովյան տարածաշրջանի պատասխանատվությունը:

Միջազգային այս հեղինակավոր կազմակերպության մեջ բարձր պատասխանատվություն ստանձնելը լավագույն հնարավորություն է ստեղծում ՀՅԴ երիտասարդականի համար՝ Հայաստանն ու հայությունը ճիշտ կերպով ներկայացնելու միջազգային երիտասարդական հանրությանը եւ վերջիններիս ծանոթացնելու հայ ազգի արդար ձգտումներին:

Միաժամանակ լինելով ղեկավար մարմնի անդամ՝ ՀՅԴ երիտասարդականը նաեւ առիթ պիտի ունենա կարեւոր դերակատարություն ունենալու աշխարհի եւ տարածաշրջանի երիտասարդությանն առընչվող հարցերի եւ պահանջ-

ների գծով:

Հիշեցնենք, որ 2015 թ. մայիսին ՀՅԴ երիտասարդականի հյուրընկալմամբ Երեւանում տեղի ունեցավ Ընկերվարական երիտասարդների միջազգային միության համաշխարհային խորհրդի ժողովը՝ աշխարհի ավելի քան 50 երկրներից՝ 160 երիտասարդների մասնակցությամբ:

Ընկերվարական երիտասարդների միջազգային միության անդամակցում են 143 ընկերվարական, ընկերվար-ժողովրդավարական եւ աշխատավորական կազմակերպություններ աշխարհի ավելի քան 100 երկրներից:

ՀՅԴ երիտասարդականը Ընկերվարական երիտասարդների միջազգային միության լիիրավ անդամ է:

ՀՅԴ Բյուրոյի Երիտասարդական գրասենյակ

Ինչո՞ւ է Ռուսաստանն արդարանում Ադրբեջանի առջև



հիմնական պատճառը Ադրբեջանի հայտնած դիվանագիտական բողոքն էր, անուղղակիորեն հաստատել է Չախարովան: «Մենք արդեն դիվանագիտական խողովակներով տեղեկացրել ենք Ադրբեջանական կողմին, որ Ռուսաստանը կապված է Չախարովանի հետ դաշնակցային հարաբերություններով, որի շրջանակներում զարգացնում է նաև ռազմատեխնիկական համագործակցությունը»,- ասել է նա:

Փաստորեն, Ադրբեջանին «հանգստացնելու» համար Մոսկվան չի բավարարվում՝ Պուտինի մակարդակով հարցի շուրջ Բաքվին բացատրություններ տալով, և հարկ է համարել հանդես գալ նաև պաշտոնական դիրքորոշմամբ: Ընդ որում՝ դա անում է այնպիսի նրբանկատությամբ և այնպիսի ձեռնարկներով, որ կարծես արդարանում է Ադրբեջանի առջև՝ իբր, ճիշտ է՝ լավ բան չենք անում, ներող եղեք, բայց ստիպված ենք համագործակցել Չախարովանի հետ: Նման մեղմ տոնայնությունը Մոսկվայից հնչում է առաջին անգամ և պարզորոշ ցույց տալիս, թե ինչպես է Ռուսաստանը «դողում» Ադրբեջանի հետ իր հարաբերությունների համար:

Սա առաջին հերթին պայմանավորված է սկսված ռուս-թուրքական դիվանագիտական պատերազմով և Ադրբեջանի համար Մոսկվայի ու Անկարայի միջև ընթացող խուլ պայքարով: Եվ չնայած թվում էր, թե, հենց այդ դիվանագիտական պատերազմով պայմանավորված, Ռուսաստանի համար առավել կենսական պետք է լինեին Չախարովանի հետ հարաբերությունները, իրականում, փաստորեն, գործ ունեցած մի իրավիճակի հետ, երբ «խաղաղությունը» դարձյալ կատարվում է Ադրբեջանի վրա: Սա պարզունակ խանդի դրսևորում է: Ռուսաստանն իր վրա է վերցրել Չախարովանի անվտանգության ապահովման պարտավորությունը և Չախարովանի հետ ունի ստրատեգիական համագործակցու-

թյան պայմանագիր: Ռուսաստանը նաև Չախարովանի ռազմավարական դաշնակցին է ՀԱՊԿ-ի շրջանակներում: Եվ եթե անգամ չլինի թուրքական գործունեությունը, թուրքիայի հետ Չախարովանի ունեցած ցամաքային կապը, Չախարովանում երկու ռազմակայան ունենալու փաստը, միայն այս պայմանագրերը պետք է բավարար լինեին՝ ցանկացած այլ երկրի, առավել ևս Չախարովանի թշնամին համարվող երկրի հետ ոչ թե արդարացողի, այլ սպառնացողի դիրքերից հանդես գալու համար: Առավել ևս՝ երբ ակնհայտ է, որ եթե, Աստված մի արասցե, ռուս-թուրքական պատերազմ սկսվի, Չախարովանից բացի, ուրիշ հենման կետ Ռուսաստանը չի ունենալու:

Բայց Չախարովանի այս հայտարարությունը դրա ճիշտ հակառակ տրամաբանությունն ունեցող երկու շատ վտանգավոր ուղերձ է պարունակում: Առաջին՝ Չախարովանի վարկով զենք տրամադրելը չի խանգարում ու խանգարելու, որպեսզի Ռուսաստանը շատ ավելի ինտենսիվ շարունակի Ադրբեջանին զինտեխնիկայի մատակարարման գործընթացը: Չախարովան, թերեւս, պատահակաբար չի շեշտում, որ մատակարարումներ արվել են նաև Ադրբեջանին:

Երկրորդ, որը շատ ավելի էական է, Ռուսաստանի կողմից Չախարովանին զինտեխնիկա մատակարարելը ոչ այնքան բխում է վերջինիս անվտանգությունն ապահովելու իր հանձնառությունից կամ երկկողմ իրավապայմանագրային պարտավորություններից, այլ տարածաշրջանում ուժերի բալանսը պահպանելու անհրաժեշտությունից, ինչով փաստորեն արդարացվում է Ադրբեջանի հետ շարունակվող շատ ավելի մասշտաբային ռազմատեխնիկական համագործակցությունը: Ռուսաստանը հարկ չհամարեց 2014թ. Չախարովանի արդարանալ, Չախարովանի ըմբռնումով մոտենալու կոչ անել, երբ բացահայտվեց Ադրբեջանին 5 մլրդ դոլարի չափով հարձակողական ժամանակակից զինտեխնիկա վաճառելու՝ դեռևս 2011թ. կնքված պայմանագիրը, որը, եթե իրերը

կոչենք իրենց անունով, ուղղակի դավադրություն էր Չախարովանի նկատմամբ: Այն ժամանակ Մոսկվան սառնասրտորեն հայաստանյան հասարակությանը բացատրում էր, որ այդպիսի դրեւ արտառոց բան չկա, և որ ինքը պարզապես բիզնես է անում Ադրբեջանի հետ: Ի դեպ, այդ բիզնեսի շնորհիվ, ըստ Ստոկհոլմի միջազգային ինստիտուտի կատարած հետազոտության արդյունքների, Ռուսաստանը 2011-ից 2015թթ. ընկած ժամանակահատվածում իր ռազմական արտահանման ծավալները մեծացրել է 264 տոկոսով կամ 2,5 անգամ, ինչը ապահովել է հիմնականում հենց ռուս-ադրբեջանական վերուշյալ գործարքի միջոցով, իսկ Ադրբեջանը դարձել է Եվրոպայում զենքի ամենախոշոր գնորդը:

Բայց եթե մինչև վերջ անկեղծ լինենք, Ռուսաստանը Չախարովանին արդարանալու և նրան կոչ անելու առանձնապես կարիքն էլ չունի: Որովհետև դրա համար նախ Չախարովանից համարժեք ռեակցիա պետք է լիներ, նախ Չախարովանը պետք է բողոքի նոտա հղած լիներ, որի համար թե՛ քաղաքական, թե՛ իրավական և թե՛ բարոյական շատ ավելի մեծ իրավունքներ ուներ, քան հիմա իրեն վերապահում է Ադրբեջանը: Մինչդեռ ի՞նչ ռեակցիայի կամ ի՞նչ նոտայի մասին կարող է խոսք լինել, երբ ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը հայտարարում է, թե իրենք հասկանում են, որ Ռուսաստանը սուվերեն իրավունք ունի զենք վաճառելու՝ ում ցանկանա, այդ թվում՝ հենց Չախարովանի թշնամին հանդիսացող և այդ զինտեխնիկական Չախարովանի դեմ ուղղվող աներկբա միտում ունեցող Ադրբեջանին: Ի՞նչ ռեակցիայի մասին կարող է խոսք լինել, երբ պաշտոնապես հաստատվում է, որ Երևանը դեռ 2011թվականին է իմացել ռուս-ադրբեջանական այդ ահռելի գործարքի մասին և այդ ողջ ընթացքում, փաստորեն, լուռ հետևել է, թե ինչպես է Մոսկվան զարգացնում իր բիզնեսը Չախարովանի շահերի հաշվին:

Գեորգ ԴԱՐԲԻՆՅԱՆ

Ռուս-թուրքական լարվածությունից ՀՀ-ն չի կարող չեզոք մնալ. Արա Պապյան



հատկապես՝ տնտեսական առումով: Դրա համար, ցավոք, ներքին թուլությունը թույլ չի տալիս օգտագործել արտաքին հնարավորությունները»,- ասել է նա:

Ըստ Պապյանի՝ ռուս-թուրքական հարաբերությունների լարվածությունը մեր գործունեության համար ՌԴ-ում մեծ հնարավորություն է ստեղծում՝ գոնե հնչեցնելու մեր խնդիրները, մեր տեսակետը: «Բնականաբար, սա անդրադառնում է նաև ԼՂՀ հակամարտության վրա: «Մեկ ազգ՝ երկու պետություն» սկզբունքը նաև Ալիևն է հնչեցրել և, կարծում եմ՝ դրանով է պայմանավորված մեր ՊՆ-ի կողմից հայտարարված նոր քաղաքականությունը, այն է՝ սպասողական, պաշտպանական քաղաքականությունից անցնել զսպման և, ինչ-որ տեղ նաև պատժելու քաղաքականությանը»,- նշել է նա:

Պապյանը շեշտել է, թե ՌԴ-ից զենքի մատակարարման ավելացումը պայմանավորված է ՌԴ-ի շահերով: «Իհարկե, իրենց շահերի համար են անում, բայց երբ համընկնում է մեր շահերին, դա լավագույնն է քաղաքականության մեջ»,-

ասաց նա:

«Մոդուս վիվենդի» կենտրոնի ղեկավարի խոսքով՝ այն, որ հակամարտությունը կխորանա և կհանգեցնի դասական պատերազմի, այդքան էլ հավանական չէ: «Կարծում եմ՝ ցամաքային, ճակատային պատերազմի չի հանգեցնի, այլ կլինեն ածանցյալ պատերազմներ, այսինքն՝ երբ ուժերը իրենց ռազմական բախումները երրորդ երկրների տարածքում են իրականացնում: Հիմա Սիրիայի տարածքում տեղի ունեցածը ներսիրիական խնդիր չէ: Շահերի բախում կա, մի կողմից՝ ամենակտիվ խաղացող Թուրքիայի, Սաուդյան Արաբիայի, Զաթարի, իսկ մյուս կողմից՝ ՌԴ-ի միջև, որը ոչ թե պաշտպանում է Ասադին, որովհետեւ շատ է սիրում, այլ որովհետեւ միակ կառչելու տեղն է մնացել Միջերկրական ծովում դերակատարություն պահելու համար: ՌԴ-ի համար ռազմական բաղադրիչը կարելու է եղել և շարունակում է մնալ նրա ուժեղ կողմը, ինչն էլ նա օգտագործում է»:

Անդրադառնալով ՀՀ-ի արտաքին քաղաքականության և այն կոչերին, թե ՀՀ-ն չպետք է միջամտի, չեզոքություն պահպանի. ըստ Արա Պապյանի՝ տրամաբանորեն ճիշտ է, բայց Եուրոպա դժ-

վար իրականացնելի: «ՀԱՊԿ-ի հետ ունենք փոխադարձ պայմանավորվածության զանազան պայմանագրեր. ռուսական սփյուռքն արդեն իսկ ներգրավված է: Չեմ ընդունում այն տեսակետը, թե եթե ՀՀ-ն խոսի, ապա Մոսկվայի կամ Կարսի պայմանագրի չեղարկման մասը վտանգավոր կլինի ՀՀ-ի համար, քանի որ Թուրքիայի համար պատրվակներ միշտ էլ կան»,- ասել է նա և հավելել, թե ՌԴ-ում պետք է ակտիվացնել գործընթացը և մեր շահերը ուստի կարելի է ներկայացնել, ինչպես նաև հնարավորինս ամրացնել ռազմական պաշտպանությունը:

«Որովհետեւ եթե ռազմական բախում լինի, մենք ներքաշվելու ենք. ուզենք, թե չուզենք»,- ասաց նա՝ հավելելով, թե Թուրքիան մեզ չի ընկալում չեզոք կողմ:

Չնայած նման համոզմանը, Արա Պապյանը նշել է, որ իր աղբյուրներից տեղեկացված է՝ ՌԴ-ի հետ գոնե փակ քննարկումներ չեն գնում: «Մոսկվան ինտենսիվորեն խոսում է Մոսկվայի պայմանագրի չեղարկման մասին, ՀՀ-ն պետք է հստակ ցույց տա դրա անօրինականության մակարդակը»,- շեշտել է նա:

«ԱՊՍՈՒԺ»

Չախարովանի հարեանությամբ տեղի ունեցող իրադարձությունները չեն կարող չազդել Չախարովանի վրա: Այդ գործընթացները կամ մեր դեմ են, կամ հօգուտ մեզ: Նման համոզման է «Մոդուս վիվենդի» կենտրոնի ղեկավար Արա Պապյանը:

«Ռուս-թուրքական լարված հարաբերությունների ազդեցությունը տարածաշրջանի վրա բավական լավ արտաքին աշխարհաքաղաքական հնարավորություն է, բայց՝ ներքին ծանր վիճակ,

Արթուր Մկրտչյանը կդառնար 57 տարեկան

ԼՂՀ ԳԽ առաջին նախագահ Արթուր Մկրտչյանը փետրվարի 16-ին կդառնար 57 տարեկան:

Արթուր Մկրտչյանն ընդամենը 32 տարեկան էր, երբ ընտրվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի առաջին նախագահ, եւ 33 տարեկան, երբ ավարտվեց նրա կարճ, բայց պայծառ ու նվիրական կյանքի ուղին. մի ուղի, որն անջնջելի հետք է թողել Արցախի պատմության մեջ: Նրա դեմ արձակված կրակոցի պատճառն այդպես էլ մնացել է չպարզված, իսկ նրան սպանած գնդակը՝ չգտնված:

Արթուր Մկրտչյանը ղեկավարել է ընդամենը 97 օր, բայց նրա անձը, կյանքի ուղին եւ ճակատագիրն այնքան ներխուժված են եղել հայ ժողովրդի տրագույն պատմությանը, որ նրա ղեկավարման 97 օրերը նրա անունն առհավետ գրել են ժողովրդի հիշողության մեջ:

Քաղաքականության մեջ նրա անփորձությունն ու անվարժությունը, որտեղ նա հայտնվել էր ճակատագրի բերմամբ, լիազափ կերպով փոխհատուցվում էին նրա բնատուր խելքով, բացարձակ օրինավորությամբ եւ Շարժման նպատակներին ու գաղափարներին հավատարմությամբ. այդ մասին փաստում են այն մարդիկ, ովքեր երբեւէ առիթ են ունեցել շփվելու Արթուր Մկրտչյանի հետ կամ գոնե փոքր-ինչ ծանոթ են նրա գործունեությանը:

Ա.Մկրտչյանի գործունեությունը՝ 1988թ. փետրվարի 12-ի Հաղորդի հանրահավաքից մինչեւ նախագահ ընտրվելը, եղել է սրընթաց ու զարմանք հարուցող:

Ոչ մեկի համար էլ գաղտնիք չէ, որ Արթուր Մկրտչյանը չի ընդունվել Հայաստանի այն ժամանակների իշխանությունների կողմից, ինչն անհերքելի

փաստ է, դեռ ավելին՝ նրա ընտրվելուց հետո մի քանի օր շարունակ Հայաստանը զրկել է Ղարաբաղին բոլոր տեսակի օգնությունից:

Բոլոր այն մարդիկ, ովքեր բախտ են ունեցել գեթ մեկ անգամ շփվելու Արթուր Մկրտչյանի հետ, ակնածանքով են խոսում նրա մասին: Ա. Մկրտչյանի մասին իր ժամանակակից Գազիկ Ավանեսյանը հուզմունքով է խոսում: Նրանք ցանոթա-



ցան, երբ դեռ նոր պետք է սկսվեր Արցախյան շարժումը, երկար ճանապարհ անցան միասին՝ հայկական հեռուստատեսություն ունենալու համար ստորագրահավաքից մինչեւ փետրվարյան ցույցեր եւ պատերազմ:

«Այսօրվա պես հիշում եմ փետրվարի 12-ի Հաղորդի ցույցը, որը, ըստ էության, Արցախյան շարժման սկիզբն էր ազդանշան: Ցույցի ժամանակ, երբ ելույթ ունեցավ Արթուր Մկրտչյանը, բոլորը քարացած լսում էին: Հավաքված գյուղացի, մշակ, թե մտավորական, բոլորին հասանելի էր նրա խոսքը: Դա նրա յուրահատկություններից մեկն էր՝ խոսել

այնպես, որ բոլորի սրտի թելերին կաշի, միասնություն սերմանի՝ վստահեցնելով, որ դա է մեր ազգի գոյատեւման միակ երաշխիքը»,- նշում է Գազիկ Ավանեսյանը:

ԼՂՀ ԱԺ փոխնախագահ, Արցախի ԿԿ անդամ Վահրամ Բալայանը Արթուր Մկրտչյանի հետ, բացի գաղափարական եւ կուսակցական ընկերներ լինելուց, նաեւ մտերիմներ էին եւ միեւնոյն մաս-

քաղաքական դաշտ բերեց նոր մշակույթ՝ ազնվություն, մարդասիրություն, նվիրվածություն, այն ամենը, ինչը մեզ համար ուղենիշ պետք է լինի մեր երկիրը զարգացնելու, հզորացնելու համար»:

Լեռնային Ղարաբաղի Գերագույն խորհրդի առաջին նախագահ Արթուր Մկրտչյանն այն քաղաքական գործիչներից էր, ում մասին ասում են՝ նա բարոյականություն էր քաղաքականության մեջ: Որքան էլ ասված խոսքերը պարահոսքային թվան առաջին հայացքից, սակայն Արթուր Մկրտչյանին քաջածանոթ մարդիկ հաստատում են այդ խոսքերը: Արցախյան պայքարի գործընթացի ամենակարեւոր հարցը կամ գործոնը մաքրությունն էր, գաղափարի նախապատվությունը ամեն տեսակ նպատակներից: Ղեկավարի կերպարը, նկարագիրը պետք է բարոյական լինի:

Արթուր Մկրտչյանն Արցախյան Շարժման այն առաջամարտիկներից էր, ով խորապես տիրապետում էր ազգային արժեքներին եւ ում համար ի վերուստ պարզ էր, որ մեր ժողովրդի գոյատեւման խնդիրն անհրաժեշտ է առանց նրա հավաքական ուժի եւ պայքարի:

Օժտված լինելով մարդկային բարձր հատկանիշներով՝ նա Շարժման հորձանուտում հայտնվեց որպես հանրության կողմից ընդունելի դեմք ու կազմակերպիչ, իսկ հետագայում դարձավ ազգային խորհրդանիշ: Արթուր Մկրտչյանը երկրի ղեկավարման ղեկը ստանձնեց դժվարին ժամանակահատվածում:

Արթուր Մկրտչյան քաղաքական գործիչ եւ Արթուր Մկրտչյան մարդու մասին սերունդները դեռ երկար են խոսելու, եւ դեռ կգրվեն գրքեր ու գիտական աշխատություններ նրա վարած քաղաքական ուղեծրի մասին:

«ԱՊՄԱՍԺ»

Քրիստոսի տարիքում եվ... Քրիստոսաբար /Արթուր Մկրտչյանի հիշատակին/

Ինձ բախտ է վիճակվել լինել այն քչերից մեկը, ովքեր նախախնամությամբ գտնվել են Արցախի ազգային-ազատագրական շարժման ակունքներում՝ անմիջական մասնակցություն ունենալով նրա ձեւավորումը: Ահա նրանք. Հաղորդում՝ Արթուր Մկրտչյան, Էմիլ Աբրահամյան, Վիգեն Գրիգորյան, Մարտունի-ում՝ Վլադիկ Խաչատրյան, Գրիգոր Ուլուբաբյան, Մանֆրեդ Բախշյան, Մարտակերտում՝ Վիգեն Շիրինյան, Ներսես Օհանջանյան, Վազիֆ Գալստյան, Ռուդիկ Հյուսնունց, Ասկերանում՝ Սլավիկ Առուշանյան, Սլավիկ Միրզոյան եւ ձեր խոնարհ ծառան, Ստեփանակերտում՝ Արկադի Կարապետյան.../Թվարկեցի ոչ թե նրանց, ում հիշում եմ, այլ՝ ում գիտեի/: Հետագայում, իհարկե, շրջանակը հետզհետե ընդլայնվել է՝ շնորհիվ նոր նվիրյալների, սակայն, 1987-ի շոգ ամռանը թվարկվածներն էին հենց կազմում այն հիմնական կորիզը, որոնց շուրջ կամ որոնց զլխավորությամբ ձեւավորվել են ընդհատակյա կազմակերպությունները հիշյալ շրջաններում ու Ստեփանակերտում:

Սրտի անհուն կսկիծով եմ նշում, որ մեր պայքարի առաջին դրոշակակիրներ-

րից ողջ են մնացել քչերը: Շատերը չկան: Ամենայն հավանականությամբ՝ կյանքը ապրողներիս ժպտացել է պատահականորեն: Թեպետ՝ ո՛վ գիտի, մեր մնալու՞



մեջ էր պատահականության մատը խառնը, թե՞ նրանց գնալու: Կամ՝ ո՛վ կարող է ասել՝ գնացողներն են շահել, թե՞ մնացողներս...

Առաջինը Արթուրը հրաժեշտ տվեց /թե՞ լքեց/ մեզ: Քրիստոսի տարիքում: Թող ների ինձ Տերը, նաեւ՝ Քրիստոսա-

բար... Ասում են՝ դժբախտ դիպվածն էր պատճառը:

Չգիտեմ, չեմ կարող ասել՝ այդպե՛ս էր իրականում, թե՞ այդպես չէր: Գիտեմ մի

բան: Եթե այդ դիպված կոչվածը այցի չգար Արթուրի նախագահության 97-րդ օրը, մեկ է, պիտի գար՝ վաղ թե ուշ: Չէր կարող չգալ: Ու դա, գուցե թե ինչ-որ տեղ նաեւ անհրաժեշտություն էր: Ինչպես /կրկին հայցում եմ երկնայինի ներողատությունը/ Քրիստոսի նահատակու-

թյունն էր անհրաժեշտ: Որովհետեւ, գիտե՛նք, Ազնիվը, Առաքինին, Վեհը երկար չէն ապրում: Չեն կարող երկար ապրել: /Չեմ ասում, թե երկրի վրա տեղ չունեն նրանք/:

Այդպես է եղել միշտ: Այդպես է նաեւ հիմա: Քանզի երկրի վրա թագավորում է նեռը՝ գորշության, կեղծի, ստի, ստորի, բիրտի ջատագովն ու հովանավորը, լույսի, գեղեցիկի, վսեմի երդվյալ թշնամին: Եվ այդ աղտոտություններից ու այլանդակություններից փրկելու համար՝ չէ Տերը ամեն անգամ աճապարում երկինք համբարձվել իր սիրեցյալներին:

Այսօր, վերստին գլուխ խոնարհելով Արթուր Մկրտչյանի եւ մեր մյուս վեհանձն տղաների անմեռ հիշատակի առաջ, կրկին ու կրկին հիշենք, վերհիշենք, թե ինչի՞ համար էր մեր պայքարը եւ հանուն ինչի՞ էր նրանց ինքնազոհությունը: Հիշենք ու կարողանանք ինքնամաքվել, մեզնից թթափել առտնին, չնչին, նեղ-անձնական հակումները՝ ամեն կերպ ձգտելով նմանվել նրանց, ասել է թե՛ ինքներս մեզ, ինչպես երանելի 88-ին էինք՝ մաքուր, միակամ, կուռ, հզոր, անպարտելի...

Կոմիտաս ԴԱՆԻԵԼՅԱՆ

